ՆՈՐ ԳՐՔԵՐ

«Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հատոր Ա, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1965 թ., տպաքանակը՝ 1000, 1634 էջ, գինը 6 ռ.։

Մատենադարանի հայերեն ձեռագրերի եռահատոր ցուցակի ներկա հատորը իր մեջ ընդգրկում է № 1—5000 ձեռագրերի նկարագրությունները, նրանց գրչության ժամանակի, վայրի և բովանդակության մասին տեղեկություններ, ինչպես նաև սովետական իշխանության տարիներին հավաքված գրչագրերի ձեռք բերման պատմությունը։

Հատորի վերջում կան մի քանի անհրաժեշտ ցանկեր, որոնք, ինչ խոսք, կհեշտացնեն հայագետների աշխատանքը այս գրքից օգտվելիս։

Ձեռագրացուցակը խմբագրել են ՀՍՍՌ ԳԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր Լ. Խաչիկյանը և բանասիրական գիտությունների դոկտոր Աս. Մնացականյանը։

Բ. Ե. ԹՈՒՄԱՆՅԱՆ — **«Առձեռն տոմարացույց»**, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1965 թ., տպաքանակը՝ 1500, 65 էջ, գինը՝ 10 կ.։

Գրքույկում տրված են հայ մատենագրության մեջ օգտագործված տոմարների կանոնները ու աղյուսակները, ինչպես նաև տարբեր տոմարների զուգակցությունը, շաբաթվա օրերի, Լուսնի փուլի հասակի որոշումը և այլն։

Լ. Պ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ — **«Երևանի պետական համալսարանը»**, «Միտք» հրատարակչություն, 1965 թ., տպաքանակը՝ 5000, 296 էջ, գինը՝ 1 ռ. 35 կ.։

Գրքում արխիվային փաստաթղթերի հիման վրա հանգամանորեն շարադրված է Հայաստանի ամենախոշոր ուսումնա-գիտական հաստատության՝ Երևանի պետական համալսարանի հիմնադրման ու գործունեության առաջին տասնամյակի պատմությունը և այն դերը, որ կատարել է նա գիտության զարգացման ու որակյալ մասնագետների պատրաստման գործում։

Աշխատությունն ունի հավելված, ուր բերված են ուսումնասիրվող շրջանին վերաբերվող փաստաթղթեր և համալսարանի անվանի դասախոսների համառոտ կենսագրությունը։